



Ա Կ Ա Ց Ի Ա /Acacia/



Ակացիա լատիներեն անվանումը՝ Acacia), ակակի, կակիա, բակլազգիների (թիթեռնածաղկավորներ) ընտանիքի ծառերի, թփերի, հազվադեպ՝ խոտաբույսերի ցեղ: Հայտնի է մոտ 750 տեսակ: ՀՀ-ում գրեթե ամենուր աճում է ակացիա սպիտակ (Robinia pseudoacacia) կամ ակացիա կեղծ տեսակը:

Խոշոր, գեղազարդիչ ծառ է (բարձրությունը հասնում է մոտ 25-30մ), լայն գլանաձև սաղարթով: Տերևները բարդ, կրկնակի փետրաձև են: Ծաղիկները սպիտակ են կամ դեղնավուն, հոտավետ՝ հավաքված ողկույզաձև ծաղկաբույլերում: Պտուղը մանր սերմերով ունդ է: Ծաղկում է մայիս-հուլիս ամիսներին: Մեղրատու է:


Դեղաբույս է.

Բույսն իր մեր պարունակում է բավարար քանակության վիտամին A, C,



եթերայուղեր, իւեժ, աղաղանյութեր, ներկանյութեր: Չորացրտադիմացկուն է: Օգտագործվում է կանաչապատման և անտառաբարելավող տնկարկների ստեղծման համար, իսկ ամուր և արժեքավոր բնափայտը՝ կահույքագործության մեջ մեծ դեր և նշանակություն ունի:

Սպիտակ ակացիան լատիներեն՝ *Robinia pseudoacacia* ծառ է, պատկանում է ընդավորների (*Fabaceae*) ընտանիքին, ունի 25-30մ (միջինը՝ 12մ) բարձրություն, սփռվող սաղարթ, հաստ, մուգ և խորը ակոսավոր կեղև: Սպիտակ ակացիայի արմատային համակարգը շատ հզոր է: Նրա արմատները խորանում են մինչև 20մ և ավելի: Տերևները կենտ փետրավոր են, կարճ կոթուններով, որոնք ճյուղերի ուղղությամբ փոխակերպվում են աճառանման կեղծ բունոցների և կազմված են 4-ից մինչև 8 գույգ էլիպսաձև, բաց կանաչ, փափուկ, ամբողջաեզր տերևիկներից: Փշերը (ձևափոխված տերևներ) ամուր են, փայտաձև, շատ սուր ծայրով, մանգաղանման: Ծաղիկները բազմաթիվ են, բուրումնավետ, սպիտակ, խոշոր, կախվող ողկույզներով: Պտուղը՝ տափակ ունդ է, մինչև 10սմ երկարության, մուգ գույնի սերմերով: Սպիտակ ակացիան ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտուղները հասունանում են սեպտեմբերին և ծառի վրա մնում են կախված ողջ ձմռան ընթացքում: Այս ծառի կյանքի տևողությունը 50 տարի և ավելի է: Աճում է ճանապարհների երկայնքով, այգիներում և պուրակներում: Թունավոր են սպիտակ ակացիան և՛ սերմերը, և՛ կեղևը, և՛ արմատները: Հայրենիքը Հյուսիսային Ամերիկան է:



Հումքի հավաքումը և չորացումը

Դեղագործական հումք են հանդիսանում սպիտակ ակացիայի ծաղիկները, որոնք հավաքում են ծաղկման սկզբին, կիսաբացված վիճակում: Չորացնում են ստվերում՝ ծածկի տակ, լավ օդափոխվող տարածքում, կամ էլ չորանոցներում՝ 40-50°C ջերմության պայմաններում: Չորացվող հումքը պետք է ցրված լինի բարակ շերտով և հաճախ շրջվի: Կեղևը և տերևները հավաքում են ամբողջ աճի /վեգետացիայի/ շրջանում:

Կիրառումը բժշկության մեջ

Երիտասարդ ծառերի կեղևի եփուկը ժողովրդական բժշկության մեջ օգտագործվում է գաստրիտների սրացման և խոցային հիվանդության ժամանակ, իսկ սպիրտային թուրմը՝ Բուլղարիայում և Գերմանիայում, ստամոքսահյութի թթվայնության բարձրացման և ստամոքսի այլ հիվանդությունների դեպքում: Տերևների, երիտասարդ ընձյուղների թուրմն օգտագործվում է գաստրիտների սրացման և ստամոքսի ու տասներկուամատնյա աղիքի խոցերի ժամանակ: Ծաղիկների եփուկը ժողովրդական բժշկությունում արդյունավետ են համարում երիկամների և միզապարկի հիվանդությունների ժամանակ, թուրմը՝ ռևմատիզմի ժամանակ, արտաքին ձևով: Սպիտակ ակացիայի ծաղիկներն օգտագործում են խառնուրդի ձևով՝ սովորական արջախաղողի տերևների, սովորական տարկավանի ծաղիկների, կապույտ տերեփուկի ծաղիկների, մատուտակի արմատների հետ, որպես միզամուղ հավաքածու:

Դեղաձևերը, օգտագործման մեթոդները և չափաբաժինները

Մպիտակ ակացիայի կեղևի եփուկը: 1-2ճ/գ մանրացված հումքի վրա ավելացնել 500մլ ջուր, եռացնել 20ր, քամել տաք վիճակում և եռացրած ջրով ծավալն ավելացնել մինչև նախկին մակարդակը (500մլ): Օգտագործել փոքրիկ բաժիններով՝ 2 օրվա ընթացքում: Եթե եփուկի օգտագործումը օրգանիզմը լավ է ընդունում, կարելի է խմել օրվա ընթացքում, ցանկալի է գոլ վիճակում:

Ակացիայի ծաղիկների եփուկը: 1ճ/գ թարմ կամ չորացած հումքի վրա ավելացնել 500մլ ջուր, եռացնել 3ր, քամել և եռացրած ջրով ծավալն ավելացնել մինչև նախկին մակարդակը:

Ակացիայի ծաղիկների թուրմ: Հումքին ավելացնում են սպիրտ կամ օղի և թրմում 2 շաբաթ՝ արևի տակ: Օգտագործել արտաքին:

Տերևների և երիտասարդ ընձյուղների թուրմ: Հումքը թրմում են 40%-անոց սպիրտի մեջ՝ 1÷10 հարաբերությամբ, 15օր՝ պարբերաբար խառնելով: Օգտագործել օրը 3 անգամ՝ ուտելուց առաջ, 1թ/գ:



Ակացիայի ծաղիկների թուրմ: 10գ հումքին ավելացնել 200մլ եռացրած ջուր, թրմել, ապա քամել:

Հակացուցումները և հնարավոր կողմնակի ազդեցությունները:

Դեղաձևերի ներքին օգտագործման դեպքում (սերմեր, կեղև, արմատներ) պետք է պահպանել զգուշություն՝ նկատի ունենալով նրանց թունավոր

լինելը: Մուր թունավորումներն ուղեկցվում են թուլությամբ, սրտխառնոցով, փսխումով, քնկոտությամբ կամ գլխացավով, վատ ինքնազգացողությամբ: Նման երևույթներ կարող են լինել նաև բնափայտի մշակման ժամանակ: Ակացիայի ակալոիդների հանդեպ հատկապես զգայուն են ձիերը: Կենդանիների թունավորման ժամանակ ի հայտ են գալիս խիստ արտահայտված որովայնացավեր, դողացում են, դառնում գերզրգոված, առաջ են գալիս ջղակծկումներ, սրտի աշխատանքի

թուլություն: Որպես առաջին օգնություն կատարվում է ստամոքսի լվացում, աղսորբող նյութերի նշանակում, ախտանշանային (սիմպտոմատիկ) բուժում (սրտային և այլ միջոցներ):

Օգտագործումն այլ բնագավառներում

Օգտագործում են սննդի, լաքերի, ներկերի արդյունաբերության և պարֆյումերիայի մեջ: Տերևները կեր են հանդիսանում տնային կենդանիների համար: Մպիտակ ակացիայի բնափայտից պատրաստված մանրահատակն իր որակով չի զիջում կաղնու փայտից պատրաստված մանրահատակին: Լայնորեն օգտագործվում է այգիներում և պուրակներում որպես դեկորատիվ և բուրավետ բույս: Մպիտակ ակացիան պիտանի է ափերի, կիրճերի, գառիվայրերի ամրացման, դաշտապաշտպան շերտերի համար: Հիանալի մեղրատու բույս է: Ծաղիկներում ամենաշատ նեկտար լինում է առավոտյան ժամերին՝ 18-240C-ի պայմաններում: Ծաղիկները նեկտար են անջատում 3-4 օր: Մեկ ծաղկի նեկտարի մեջ շաքարի քանակը հասնում է մինչև 2մգ: Ուժեղ մեղվարնտանիքը մեկ ծառից կարող է հավաքել մոտ 8կգ մեղր: Ակացիայի ծաղիկներից ստեղծված մեղրը շատ բաց է, թափանցիկ, բյուրեղանում է շատ դանդաղ: Քչերին է հայտնի, որ ակացիան իրականում կոչվում է Ռոբինիա: Ծառատեսակի մոտակա «ազգակիցն» է Ռոբինիա կաչունը- *Robinia viscosa*, որի ծաղիկները վարդագույն են կամ կարմիր. ունի մեծ դեկորատիվ կիրառում:



Իրական ակացիաների ընտանիքին պատկանում են մոտ 500 տեսակներ, որոնց մեծամասնության հայրենիքը Ավստրալիան է:

Դեղատոմսեր

Երիկամների, միզապարկի բորբոքման դեպքում

1թ/գ թարմ կամ կեսթ/գ չորացրած ծաղիկներին ավելացնել 150մլ ջուր, եռացնել 3ր, քամել, վերականգնել նախնական ծավալը եռացրած ջրով: Խմել 1ճ/գ, օրը 3-4 անգամ, սնունդ ընդունելուց առաջ:

Ստամոքսաբորբի դեպքում

1թ/գ մանրացրած կեղևին կամ մատղաշ ճյուղերին ավելացնել 300մլ գուլած ջուր, 20ր եռացնել ջրային բաղնիքի վրա, քամել, վերականգնել նախնական ծավալը եռացրած ջրով: Բաժանել մասերի, խմել երկու օրվա ընթացքում: Խորհուրդ է տրվում՝ սնունդ ընդունելուց առաջ: Խորհուրդ է տրվում ստամոքսահյուսի բարձր թթվայնության դեպքում:

Հանգստացնող, քնաբեր միջոց

1-2գր ակացիայի ծաղկափոշին թրմել 20-30ր, 50մլ եռացրած ջրի մեջ: Խմել քնելուց առաջ:

Երիկամների քրոնիկ հիվանդության դեպքում

Խառնել ակացիայի ծաղկափոշին և մայիսյան մեղրը 1÷3 ծավալային հարաբերությամբ: Խմել օրը 2-3 անգամ, 1թ/գ, սնունդ ընդունելուց առաջ: Նախապես թրմել 2-3ժ տաք ջրի մեջ, շարունակել 30-45 օր:



Այրուցքի դեպքում

Թրմել ակացիայի մանրացրած, մատղաշ ճյուղերը 70%-անոց սպիրտի մեջ (1÷10 քաշային հարաբերությամբ): Խմել օրը 3 անգամ 10-ական կաթիլ, 1ճ/գ ջրի հետ, եթե այրուցքի պատճառը ստամոքսահյուսի բարձր թթվայնությունն է:

Վարիկոզի դեպքում

Ապակե տարան լցնել ակացիայի ծաղիկներով, ավելացնել օղի, թրմեք 7 օր: Օգտագործելուց առաջ խառնել ջրի հետ (1÷1), օրը մեկ անգամ քսել ոտքի հիվանդ մասերին:

Միզապարկի մանր քարերի, ավազի դեպքում

Խառնել ակացիայի ծաղիկները շաքարավազի հետ 2÷1 քաշային հարաբերությամբ: Խառնուրդը տեղավորել արծնապատ տարայի մեջ, ծածկել սպիտակ թղթով, վրայից դնել տախտակ և ծանր իր: Տեղադրել հով մութ տեղում 7-10օր:

Ստացված հյութը լուծել հավասար քանակությամբ մաքուր բժշկական սպիրտի մեջ: Տասր օրից ոգեթուրմը պատրաստ է: Խմեք 1թ/գ, օրը 3 անգամ, սնունդ ընդունելուց առաջ: Բուժման ժամկետը համաձայնեցնել բուժող բժշկի հետ:



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլխավոր Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):